

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**РЕСПУБЛИКА АРЦАХ**  
**THE REPUBLIC OF ARTSAKH**

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ**  
**ВЕСТНИК УНИВЕРСИТЕТА МЕСРОП МАШТОЦ**  
**MESROP MASHTOTS UNIVERSITY BULLETIN**

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԺՈՂՈԿԱԾՈՒ

Հրատարակվում է Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի և Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդների որոշմամբ:  
Հրատարակվում է 2006 թվականից:

Публикуется по решению ученых советов Университета Месроп Маштоц г.Степанакерта и Ереванского государственного университета.  
Издается с 2006 года.

It is approved by Stepanakert Mesrop Mashtots University and Yerevan State University Science Councils.  
It is published since 2006.

Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու:  
«Լիմուշ» հրատարակչություն, 2020թ.,

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Կարդանյան Արարատ, պատմ.գիտ.թեկ., դոցենտ  
ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մինասյան Լիանա

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Նախագահ՝**

**Գաբրիելյան Ղոնարա  
ՄՄՀ ռեկտոր, մանկ.գիտ.թեկ., դոցենտ**

Աթանեսյան Արթուր  
Աղայան Արարատ

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ., պրոֆեսոր  
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ավետիսյան Պավել

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն,  
պատմ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ավետիսյան Հայկ

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պատմ. գիտ.  
դոկտոր, պրոֆեսոր

Բաղդասարյան Նելլի

ԱրՊՀ պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ., ՄՄՀ «Կովկասագիտության  
կենտրոնի» Հարավային Կովկասի և Մերձավոր Արևելքի  
տարածաշրջանի գիտաճյուղի ղեկավար

Խանյան Սոկրատ

ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի պրոֆեսոր, բան. գիտ.  
դոկտոր

Կարապետյան Ռուբեն

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող,  
պատմ.գիտ.դոկտոր

Հայրապետյան Էլենորա  
Հովհաննիսյան Լավրենտի  
Հովհաննիսյան Նարինե

ՄՄՀ պրոռեկտոր, մանկ. գիտ.թեկ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, բան.գիտ.դոկտոր  
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.

Ղարախանյան Լուսինե

ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարար, հոգ. գիտ. թեկ.,  
դոցենտ.

Մինասյան Էդիկ  
Միրզոյան Լավրենտի

ԵՊՀ պատմության ֆակուլտետի ղեկան, պատմ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր  
ՀՃՇԱՀ, մանկ. գիտ.թեկ., դոցենտ, ՀՀ պետական կառավարման  
ակադեմիայի դասախոս

Մկրտչյան Արթուր

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ղեկան, փիլիսոփ.գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր

Մնացականյան Հայկ

ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի  
վարիչ, տնտ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

Ծաղիկյան Ստեփան

ՀՈՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի  
ամբիոնի վարիչ, իրավ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Պետիկյան Սիրանուշ  
Պետրոսյան Գեղամ

ՄՄՀ իրավագիտության ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ  
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկան,  
պատմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

Պետրոսյան Վահրամ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի  
վարիչ, ԵՊՀ ՀՀԻ հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ, պ.գ.թ.,  
դոցենտ

Պողոսյան Սամվել  
Սաֆրաստյան Ռուբեն

ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմ.գիտ.դոկտոր  
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ  
ԳԱԱ ակադեմիկոս

**ГЛАВНЫЙ РЕДАКТОР  
ЗАМЕСТИТЕЛЬ ГЛАВНОГО РЕДАКТОРА**

**Варданян Арарат, к.и.н., доцент  
Минасян Лиана**

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ:**

<b>Председатель:</b>	<b>Габриелян Донара Ректор УММ, к.п.н., доцент</b>
Атанесян Артур Агасян Арарат Аветисян Павел	Зав.кафедрой прикладной социологии, д.п.н., профессор Директор Института искусств НАН РА, д. иск., профессор, член-корреспондент НАН РА Директор Института археологии и этнографии НАН РА, д.и.н., профессор, член-корреспондент НАН РА
Аветисян Гайк Багдасарян Нелли	Зав.кафедрой археологии и этнографии ЕГУ, д.и.н., профессор Доцент кафедры истории АрГУ, к.и.н., научный руководитель отдела региона Южного Кавказа Ближнего Востока Центра Кавказоведения УММ
Ханян Сократ Карапетян Рубен Айрапетян Элеонора Оганесян Лаврентий Оганесян Нарине Оганесян Лусине Минасян Эдик Мирзоян Лаврентий Мкртчян Артур Мнацакчян Гайк Цагикиан Степан Петикян Сирапуш Петросян Гегам Петросян Ваграм	Профессор кафедры литературы и журналистики АрГУ, д.ф.н. Главный научный сотрудник Института истории НАН РА, д.и.н. Проректор УММ, к.п.н., доцент Главный научный сотрудник Института языка НАН РА, д.ф.н. Доцент кафедры литературы и журналистики АрГУ, к.ф.н. Министр образования науки и культуры РА, к.п.н., доцент Декан факультета истории ЕГУ, д.и.н., профессор НУАСА, к.п.н., доцент, преподаватель Академии государственного управления РА Декан факультета социологии ЕГУ, д.филос.н., профессор Зав.кафедрой финансового учета факультета экономики ЕГУ, д.э.н., профессор Зав.кафедрой уголовного права и уголовно-процессуального права РАУ, д.ю.н., профессор Зав.кафедрой юриспруденции УММ, к.ю.н., доцент Декан факультета международных отношений ЕГУ, д.и.н., профессор Зав.кафедрой международных отношений и дипломатии ЕГУ, руководитель отдела армяно-курдских отношений ИАИ, к.и.н., доцент
Погосян Самвел Сафрастян Рубен	Профессор кафедры истории Армении АГПУ, д.и.н. Директор Института Востоковедения НАН РА, Академик НАН РА, д.и.н., профессор

**EDITOR-IN-CHIEF  
DEPUTY EDITOR-IN-CHIEF**

**Ararat Vardanyan, Candidate of Historical Sciences, Docent  
Minasyan Liana**

**EDITORIAL BOARD**

**Chairman:**

<b>Donara Gabrielyan MMU Rector, Candidate of Pedagogic Sciences, Docent</b>	
Artur Atanesyan Ararat Aghasyan	Head of YSU Applied Sociology Chair, Doctor of Political Sciences, Professor Director of Institute of Arts of NAS RA, Doctor of Art Criticism, Professor, Correspondent member of NAS RA
Pavel Avetisyan Hayk Avetisyan Nelly Baghdasaryan	Director of Institute of Archaeology and Ethnography of NAS RA, Correspondent member of NAS RA Head of YSU Archeology and Ethnography Chair, Doctor of Historical Sciences, Professor Docent at the Chair of History of ASU, Candidate of Historical Sciences, Head of the Research Branch on South Caucasus and Middle East, Caucasus Studies Centre, MMU
Sokrat Khanyan Karapetyan Ruben Eleonora Hayrapetyan Lavrenti Hovhannisyann Narine Hovhannisyann Lusine Gharakhanyan Edik Minasyan Lavrenti Mirzoyan Artur Mkrтчyann Hayk Mnatsakanyan	Professor of ASU Literature and Journalism Chair, Doctor of Philology Leading researcher of the Institute of history of NAS RA, Doctor of Historical Sciences MMU Vice Rector, Candidate of Pedagogic Sciences, Docent Chief researcher of the Institute of language of NAS RA, Doctor of Philology Associate Professor of ASU Literature and Journalism Chair, Candidate of Philology Minister of Education, Science and Culture of AR, Candidate of Psychological Sciences, Docent Dean of YSU Faculty of History, Doctor of Historical Sciences, Professor NUACA, Candidate of Pedagogy, Docent, Lecturer at State Management Academy, RA Dean of YSU Sociology Faculty, Doctor of Philosophy, Professor Head of Department of Accounting and Finance of YSU Faculty of Economics, Doctor of Economic Sciences, Professor
Stepan Tsaghikyan Siranush Petikyan Gegham Petrosyan Vahram Petrosyan	Head of RAU Criminal Law and Criminal Procedure Law Chair, Doctor of Law, Professor Head of MMU Chair of Jurisprudence, Candidate of Law, Docent Dean of YSU Faculty of International Relations, Doctor of Historical Sciences, Professor Head of YSU Chair of International Relations and Diplomacy, Head of the Department of Armenian - Kurdish Relations of IAS, Candidate of History, Docent
Samvel Poghosyan Ruben Safrastyan	Professor of ASPU Chair of Armenian History, Doctor of Historical Sciences Director of NAS RA Institute of Oriental Studies, NAS RA Academician, Doctor of Historical Sciences, Professor

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԵՐԻՐԸ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ  
ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ\***

**Առնակ Սարգսյան**

**Քանալի բառեր՝** քաղաքական մասնակցություն, քաղաքական իրավունքներ, մասնակցության ձև, կառավարման արդյունավետություն, քաղաքական կամք, իշխանություն-ժողովուրդ, որոշումների ընդունում:

Արդի քաղաքական գիտության համար օրակարգային հարց է ժողովրդավարական կառավարման համակարգի և քաղաքացիական հասարակության կայացման օրինաչափությունների բացահայտումը: Այս առումով քաղաքական մասնակցության հիմնախնդիրը հանդիսանում է ժողովրդավարական համայնքման կարևոր նախադրյալ: Համաշխարհայնացման պայմաններում գիտակցված մասնակցային գործընթացը ժողովրդաիշխանության դրսևորման ուղենիշն է, երբ հասարակության մեջ առկա խնդիրների լուծման անմիջական հաղորդակիցն է դառնում պետության քաղաքացին, իսկ պետական պաշտոնատար անձինք իրենց գործողություններով հաշվետու են նրա առաջ: Հետևաբար ժամանակակից քաղաքական իրողություններով պայմանավորված՝ մասնակցության տարբեր ձևերի տարածումը արդիականացնում է հիմնախնդրի ուսումնասիրության ինչպես գիտական, այնպես էլ մեթոդաբանական ասպեկտները:

Քաղաքական մասնակցությունը՝ որպես ժողովրդավարական պետության ձևավորման և դրսևորման առանձնահատուկ ոլորտ, հանդես է գալիս քաղաքականության սուբյեկտների վարքագծի բնորոշմամբ, որը ազդում է հասարակական-քաղաքական կյանքի մասնակցությանը: Ըստ այսմ՝ քաղաքական գիտակցության ներքո հասկացվում են մարդկային ոգու տարբեր դրսևորումները, որոնք արտահայտում են քաղաքական իշխանության մեխանիզմների գործառնությունն ու քաղաքական հարաբերությունների ոլորտում մարդկանց ու սոցիալական հանրությունների ուղղորդող վարքը[1]: Քաղաքականության ցանկացած սուբյեկտ սեփական գաղափարախոսությունը ձևավորելու կարիք ունի, որը կուղղորդի մարդկանց վարքը քաղաքական հարաբերությունների ոլորտում, կձևավորի քաղաքական կամքը, կմոբիլիզացնի նրանց ակտիվությունը, կնպաստի խմբերի սոցիալական ինտեգրմանը, որոնք ներգրավված են քաղաքական գործողություններում[2]:

Մեծ կարևորություն ունի այն հանգամանքը, որ հասարակական-քաղաքական կյանքին ներգրավվելով՝ յուրաքանչյուր ոք ունենա մասնակցության մշակույթի որոշակի գիտելիքներ և սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն: Համաշխարհայնացման պայմաններում առանց քաղաքացիների՝ իրենց իրավունքների ընկալման և իրացման հնարավոր չէ պատկերացնել ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացումը: Յուրաքանչյուր ոք հասարակական հարաբերությունների ցանկացած ոլորտում պետք է արտահայտի իր համոզմունքները և հանդիսանա դրանք կրողը:

\* Հոդվածն ընդունվել է 23.01.20:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանը: 04.02.20:

## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՄԱՐՆԻ ԼՐԱՏՈՒ 2020

Մինչ պետությունների ժողովրդավարորեն կառավարումը դրսևորվել է քաղաքական մասնակցության պահպանողական ուղղությունը, համաձայն որի քաղաքական կյանքում ժողովրդի մասնակցության ընդլայնումը պետական ապարատի կայունության և արդյունավետ գործունեություն ծավալելու վտանգ է պարունակում: Իսկ քաղաքականությունը՝ որպես հասարակության շահերի և պահանջմունքների իրացման գործընթաց, անհրաժեշտ է, որ նվազեցնի վերջինիս նկատմամբ հասարակության հետաքրքրության շրջանակը և ապահովի, որ քաղաքական որոշումները կայացնեն առավել փորձառու և իրազեկ անհատները: Մինչդեռ ազատական մոտեցումը անմիջականորեն առնչվում է ժողովրդավարական կառավարմանը, որի դեպքում քաղաքացիների ներգրավվածությունը որոշումների ընդունման գործընթացին հանդիսանում է ինչպես լեգիտիմ քաղաքական իշխանության ծնավորման, այնպես էլ քաղաքական դերակատարների և տարբեր կուսակցությունների մրցակցության ապահովման լավագույն դրսևորում: Հարկ է նշել, որ քաղաքական գործընթացներում մարդկանց ներգրավվածությունը միանշանակ չէ:

Այսպես, Ջ. Էկմանը և Ե. Էմման նշում են, որ հասարակության մի մասը ակտիվ մասնակցում է քաղաքական կյանքին, նրանք առավելագույն չափով հետաքրքրված են քաղաքականության մեջ տեղի ունեցող գործընթացներով, իսկ հասարակության մյուս մասը առանձնապես հետաքրքրված չէ քաղաքական իրադարձություններով: Ոմանք էլ ո՛չ ակտիվ, ո՛չ պասիվ մասնակցություն («չեզոք» մասնակցություն) են ունենում քաղաքական կյանքին[3]: Մասնակցության մեկ այլ տեսակ է մասնակցություն հանուն նյութական խթանների: Մասնակցության այդ ձևը գործում է, երբ մարդիկ սոցիալապես անապահով են: Ըստ այսմ՝ գործում է ժողովրդին խնդրելու կամ պարտադրելու սկզբունքը՝ մասնակցել հանրահավաքներին, նախընտրական քարոզարշավին և այլն: Այս դեպքում մասնակցային գործընթացին ներգրավված դերակատարները, հասարակությանը նյութական աջակցություն են տրամադրում, լուծում կենսական նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ, և մարդիկ մասնակցում են հանուն նյութական խթանների:

20-րդ դարի վերջին տասնամյակից սկսած՝ բազմաթիվ երկրներ նոր մեխանիզմներ էին ներդնում հասարակության կառավարման գործընթացներում քաղաքացիների ներգրավվածությունը ուղղակի և արդյունավետ դարձնելու համար՝ սկսած նոր, ապակենտրոնացված ինստիտուտներ ստեղծելուց մինչև մասնակցային և խորհրդատվական գործընթացների բազմաթիվ ընթացակարգերի կիրառումը: Ընդհանուր առմամբ այն նախաձեռնություններն են հաջողված և նպատակաուղղված քաղաքական զարգացմանը, որոնք նպաստում են հասարակական-քաղաքական գործընթացներում քաղաքացիների ներգրավվածության բարձրացմանը: Այսպիսով՝ մասնակցային գործընթացը կանոնակարգող քաղաքականությունը առավել արդյունավետ է, իսկ իրականացվող ծրագրերը՝ հաջողված, երբ միտված է համընդհանուրի կարիքների բավարարմանը: Ինչպես նշել են Ռ. Ադլերը և Ջ. Գոգինը՝ քաղաքացիական ներգրավվածությունը՝ որպես համագործակցության կամ համատեղ գործողությունների կոլեկտիվ ամբողջություն, հանդես է գալիս հանրային ոլորտում պայմանների բարելավման համար[4]:

Այս առումով նշենք, որ քաղաքական մասնակցության և կառավարման արդյունավետության միջև փոխհարաբերությունների ինստիտուցիոնալ ամրագրումը և կառավարման գործընթացներում քաղաքացիական ներգրավվածության հնարավորությունները (քաղաքական իրավունքները, քաղաքականության վրա ազդեցությունը, շահերի

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2020

արտահայտման հնարավորությունները և այլն) ազդում են կառավարման արդյունավետության վրա: Քաղաքական մասնակցության աստիճանը և ընտրված կառավարման արդյունավետության ցուցանիշները (կառավարության արդյունավետությունը, կոռուպցիայի վերահսկողությունը, կառավարման ինդեքսը) ցույց են տալիս ուժեղ և կայուն փոխհարաբերությունների բնույթը: Բացի այդ տնտեսական զարգացման և համակարգի հաշվետվողականության տեսանկյունից հատուկ ուշադրություն է դարձվում քաղաքական մասնակցության և կառավարման արդյունավետության փոխհարաբերություններին: Փաստորեն, տարբեր երկրներում քաղաքական մասնակցության դրսևորման հնարավորությունները էականորեն կապված են կառավարության արդյունավետության, կոռուպցիայի դեմ պայքարի և հատկապես զարգացող և փոխակերպող երկրների կառավարման արդյունավետության հետ: 1989 թ. կոմունիստական հասարակարգում հիմք դրվեց քաղաքական կերպարի ստանդարտների, որոնք մինչ օրս կայացման փուլում են: Մարդիկ սկսեցին ձևավորել նոր քաղաքական կուսակցություններ և շարժումներ, զբաղվել հասարակական-քաղաքական խնդիրների լուծմամբ, նպաստել քաղաքացիական հասարակության ձևավորմանը: Չնայած նախնական էյֆորիայի և քաղաքականության նկատմամբ հսկայական հանրային հետաքրքրությանը՝ ավանդական ազատական ժողովրդավարություններում աստիճանաբար սկսեց ամրապնդվել քաղաքական վերնախավի և կառույցների արդյունավետության հանդեպ հավատի զգացումը, վստահության և փոխգործակցության ընդլայնումը քաղաքական կուսակցությունների նկատմամբ: Վերոհիշյալ միտումները բնականաբար չկարողացան անտեսվել ոչ միայն գիտնականների ուշադրությունից, այլև՝ քաղաքական առաջնորդների կողմից: «Նոր ժողովրդավարություններում» քննարկման ամենատարածված թեմաներից մեկը քաղաքական մասնակցության հարցն էր: Քաղաքացիների մասնակցությունը և հնարավորությունների վերհանումը քաղաքական որոշումների կայացման գործընթացում համարվում էր վերոհիշյալ խնդիրների մեծ մասի լուծման միջոց: Ավելին, մասնակցության նոր տեսակների ի հայտ գալը նպաստեց համաժողովրդական մասնակցության ընդլայնմանը, որը հետագայում էլ ավելի մեծացրեց պետական կառավարման բարեփոխումների շրջանակը (ապակենտրոնացում)[5]:

Կառավարման նոր ձևերը պետք է ընկալվեն որպես համընդհանուր շահերի այլընտրանքային դրսևորում, որոնք լրացնում են կառավարման ավանդական ձևերը ավելի ինստիտուցիոնալ մեթոդներով: Ներկայումս կառավարումը հիմնականում վերաբերում է սոցիալական համակարգերի, հանրային-մասնավոր հարաբերությունների համադրմանը, իշխանություն-ժողովուրդ երկխոսության միջավայրի ձևավորմանը: Այսինքն՝ պետությունը և նրա քաղաքական-ինստիտուցիոնալ կարողությունները գտնվում են հասարակության հետաքրքրության կենտրոնում (պետական-կենտրոնական մոտեցում)[6]:

Այսպես, եթե քաղաքական համակարգը ավելի բաց և մրցակցային է, նրա ինստիտուցիոնալ միջավայրը մասնակցության ավելի շատ հնարավորություն է տալիս, ավելի հմուտ քաղաքական դերակատարներ են մուտք գործում քաղաքական աստիճանահարթակ և արդյունավետ կառավարում իրականացնում: Նմանատիպ քաղաքական համակարգերի շրջանակներում կառավարությունը արդյունավետ կերպով աշխատում է. մարդկանց շահերն ու պահանջումները բավարարվում են, և հանրային ծառայությունների որակը բարձրանում է: Աստիճանաբար իրականացվում է ավելի արդյունա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2020

վետ և անկախ պետական կառավարում՝ իրավասու ու փորձառու պետական ծառայողների, վստահելի կառավարության և քիչ կոռումպացված քաղաքական գործիչների և պաշտոնատար անձանց միջոցով: Հետաքրքրական է այն կարևոր դերակատարումը, որ քաղաքական մասնակցությունը իրականացնում է հասարակարգերի վերափոխման գործընթացում: Նույնիսկ բարդ պայմաններում գտնվող երկրներում կարող է ժողովրդավարական արդյունավետ կառավարում իրականացվել, եթե ավելի լայն և բաց հնարավորություններ են ապահովվում հանրության մասնակցության համար: Այնուամենայնիվ, քաղաքական մասնակցության ամրապնդումը և բարձրացումը ոչ բոլոր երկրների համար է և ոչ բոլոր իրավիճակներում: Տարբերվող պայմաններ և ազգային առանձնահատկություններ ունեցող հասարակարգերը պետք է ընտրեն այն լուծումներն ու ռազմավարությունները, որոնք համապատասխանում են իրենց քաղաքական մշակույթին: Միայն այդ դեպքում վերջիններս կարող են ձևավորել և կայացնել ժողովրդավարական ինստիտուտները և ամրապնդել մրցունակությունը[7]:

Քաղաքական մասնակցությունը արտահայտվում է երկու հիմնական ձևերով.

1. անմիջական

2. ներկայացուցչական:

Անմիջական մասնակցության ձևերն են ընտրությունները, հանրաքվեները, հանրահավաքները, երթերը, ցույցերը, բոյկոտները, որոնց միջոցով առավելագույնս դրսևորվում է քաղաքացիների կամարտահայտման սկզբունքը՝ որպես ժողովրդաիշխանության իրացման և քաղաքացիական հասարակության ինստիտուտների փոխգործակցության երաշխիք:

Ներկայացուցչական մասնակցության ժամանակ ժողովուրդն ընտրում է իր ներկայացուցիչներին՝ պատգամավորներ, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պաշտոնատար անձինք՝ լիազորելով նրանց քաղաքական իշխանություն իրականացնել ներկայացնելով իրենց շահերն ու պահանջմունքները:

Ասվածից պարզ է, որ ժողովրդավարական կառավարման համակարգը իրագործվում է, երբ քաղաքացիները ակտիվ ներգրավվում են հասարակության քաղաքական կյանքում: Քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետության կառավարմանը հանդիսանում է ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման հիմնական սկզբունքներից մեկը: Ինչպես ամրագրված է մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում՝ «յուրաքանչյուր ոք, ունի անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք: Կառավարության, իշխանության գործունեության հիմքում պետք է լինի ժողովրդի կամքը»[8]: Այսինքն՝ քաղաքացիների կամքի արտահայտումը ժողովրդավարական հասարակարգի ինստիտուտների գոյության և հետագա զարգացման հիմքն է: Վերոհիշյալով քաղաքացիները ոչ միայն հանդիսանում են իրենց քաղաքացիական և քաղաքական իրավունքների կրողը, այլև վերահսկում են պետական կառավարման համակարգի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը:

Քաղաքական մասնակցությունը հանդես է գալիս հետևյալ առանձնահատկություններով՝ քվեարկություն, անդամակցություն և ակտիվ ներգրավվածություն քաղաքական կուսակցություններին, քարոզարշավի կազմակերպում, ցույցեր և գործադուլներ, քաղաքացիական անհնազանդություն կամ ընդվզում, հանրագիր (պետիցիա) ստորագրելու իրավունք[9]:

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2020

Մասնավորապես, քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական կյանքին կախված է տիրող իրավիճակից, քաղաքական համակարգի բնույթից, ինչպես նաև մարդու քաղաքական հետաքրքրության շրջանակներից: Վերջին հաշվով մարդն ինքն է ձևավորում քաղաքական իշխանություն՝ սեփական քաղաքական գործունեության և հասարակության մեջ իր վարքագծի միջոցով:

Այս առումով նշենք, որ ժողովրդավարական հասարակարգերում քաղաքացիական անհնազանդությունը ոչ միայն չի համարվում հանցագործություն, այլև կամարտահայտման իրավաչափ դրսևորում է: Բացի այդ առավել կարևոր են նաև քաղաքացիական անհնազանդության համար պատասխանատվության տեսակները և գործողությունների շրջանակի բնորոշումը: Եթե քաղաքացիական անհնազանդություն ցուցաբերած քաղաքացին պատժվում է օրենքով, ապա դա կիրառվում է ոչ թե քաղաքացիական անհնազանդություն դրսևորելու համար, այլ այն գործողության, որը իրավականորեն սահմանված է որպես խախտում. օրինակ՝ այլոց կամ պետական գույքին վնաս հասցնելը, ինչպես նաև հակապետական, հակասահմանադրական գործողությունները: Հարկ է նշել, որ հիմնականում հանցագործություն կատարած անձինք ամեն կերպ ձգտում են, որ չբացահայտվի իրենց կողմից կատարված արարքը, իսկ քաղաքացիական անհնազանդ անձինք, հակառակը, իրենց գործողությունները չեն թաքցնում հասարակությունից և հիմնականում պատրաստ են տեղեկացնել, բացատրել կատարվածը: Այդ քաղաքացիները նաև պատրաստակամ են կրել պատիժը՝ այդպիսով ցույց տալով, որ իրենք տարբերվում են սովորական իրավախախտներից և չեն վախենում իրենց գործած արարքների համար[10]: Հետևաբար քաղաքական մասնակցության հարցում առանցքային դերակատարում ունի հասարակության մեջ քաղաքական նշակույթի դրսևորման մակարդակը, որն արտահայտվում է ժողովրդավարության նորմերի և ինստիտուտների ներդրմամբ և ընկալմամբ: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ հասարակության քաղաքացիական գիտակցության մեջ որքան խորն է ժողովրդավարական արժեքների և նորմերի ըմբռնումը, այնքան բարձր է քաղաքական մասնակցության մակարդակը: Եվ հակառակը՝ որքան ժողովրդավարական հասարակարգում ցածր է մարդու իրավունքների և ազատությունների նշանակությունը, այնքան բնակչության զգալի մասի մոտ արտահայտվում է հակակրանք և օտարում հասարակական-քաղաքական կյանքից: Իսկ մյուս կողմից քաղաքացիների երկարատև օտարումը և հասարակական-քաղաքական կյանքին չմասնակցելը հանգեցնում է շահերի ներկայացման և պահանջմունքների բավարարման անկարողության, հավատի և վստահության կորստի: Ասվածից հետևում է, որ քաղաքական մասնակցության մեջ անձի ներգրավման պատճառները կարող են տարբեր լինել.

- Նրանք չեն հավատում մասնակցության արդյունքին: Հաճախ քաղաքացիներին թվում է, որ ամեն ինչ արդեն որոշված է, նաև իրենց ձայնը. ընտրական իրավունք, հանրաքվե, կամ մասնակցության այլ ձևերին ներգրավումը որոշիչ չէ: Այդ մարդիկ կորցնում են իրենց հավատը սեփական հնարավորությունների նկատմամբ, և կարծում են, որ իրենց մասնակցությամբ ոչինչ չի կարող փոխվել քաղաքականության մեջ:
- Հասարակական-քաղաքական կյանքին ներգրավվածությունը, տարաբնույթ հարցերի բարձրաձայնումը այդպես էլ չեն ազդում իրենց անձնական կյանքի բարելավման վրա:



## ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2020

- Այլ հետաքրքրություններ և նախասիրություններ ունեն: Վերջինս սոցիալական ստրատիֆիկացիայի համընդգրկուն դրսևորման արդյունք է: Բնակչության մի մասը աչքի է ընկնում քաղաքական և քաղաքացիական մշակույթի ցածր գիտակցությամբ, իսկ մյուսը՝ հակառակը. սոցիալապես ապահովված խավի համար վերոհիշյալ գործընթացը երբեմն դառնում է անհետաքրքիր, նրանց ձեռնտու է անփոփոխ կառավարման համակարգի առկայությունը: Այդ իսկ պատճառով էլ նրանք հիմնականում չեն մասնակցում քաղաքական և քաղաքացիական գործողություններին:
- Չեն վստահում քաղաքական դերակատարներին՝ նրանց խոստումները համարելով անիրագործելի: Նրանք, հիասթափվելով քաղաքական կուսակցությունների և պաշտոնատար անձանց տված կեղծ խոստումներից, քաղաքական էլիտայի վերարտադրվելու մեխանիզմից, ինքնաբերաբար օտարվում են քաղաքականությունից:

Ինչպես նշել է Ե. Շեստոպալը՝ հասարակական-քաղաքական համակարգը կայունացնելու և զարգացնելու համար անհրաժեշտ է այն համալրել նոր կադրերով[11]: Հատկանշական է, որ պետական քաղաքականության արդյունավետության կարևոր չափանիշներից է նաև կադրային ճիշտ քաղաքականություն վարելը՝ հիմնվելով մասնագիտական բարձր պատրաստվածության և հմտությունների վրա: Քաղաքական ընտրանու հավաքագրումը առանցքային նշանակություն ունի համակարգի կայուն գործառնության և զարգացման տեսանկյունից, քանի որ ինչպիսին ընտրանու որակն է, այնպիսին նրա կառավարումն է: Նախկինում ՀՀ քաղաքական համակարգում գերիշխում էր էլիտայի հավաքագրման գիդային (փակ) մոդելը: ՀՀ «Թավշյա» հեղափոխությունից հետո քաղաքական էլիտայի հավաքագրման գիդային մոդելը իր տեղը զիջեց անտրեպրեներականին (բաց մոդելին): Սակայն ՀՀ-ում գործարկվող այս մոդելը ունի ինչպես իր դրական, այնպես էլ բացասական կողմերը: Առավելությունն այն է, որ ՀՀ-ում տարիներ շարունակ քաղաքական էլիտայի վերարտադրման մեխանիզմը դադարեց՝ համակարգը համալրելով նոր կադրերով, որը պետական ապարատի արդյունավետության բարձրացման գործոններից է: Ներկայիս կառավարությունում քաղաքական ընտրանու երիտասարդացումը վկայում է այն մասին, որ քաղաքական էլիտայի հավաքագրման մոդելը փոփոխության է ենթարկվել՝ համապատասխանեցնելով ժողովրդավարական կառավարման համակարգին: Այն, որ տարիներ շարունակ ՀՀ-ում քաղաքական համակարգը չէր համալրվում դրսից եկող ազդակներով, անվիճելի իրողություն է: Վերջինս հանգեցրել էր ոչ միայն պետական ապարատի միատարրությանը, այլև կոռուպցիոն դրսևորումների արմատավորմանը: Այս առումով չենք կարող նախկինում գործող էլիտայի փորձառությունը արդյունավետ և հանրագուտ քաղաքական որոշումների ընդունման գրավական համարել, քանի որ գործնականում փորձը ցույց տվեց մի շարք պաշտոնյաների՝ անձնական շահը հասարակականից վեր դասելու հանգամանքը: Ուստի մենք գործ ունենք երկակի ստանդարտների հետ. համակարգը համալրել անփորձ, բայց գրագետ և քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակ ունեցող անհատներով, թե՞ փորձառու, բայց հանրային շահը ստորադասող կադրերով: Բայց միևնույն ժամանակ երիտասարդ նոր կադրերը, չանցնելով քաղաքական սոցիալականացման բնականոն գործընթացը, որոշակի ռիսկայնություն են առաջ բերում քաղաքական որոշումների կայացման տեսանկյունից: Այսինքն չունենալով բա-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2020

վարար փորձ և հմտություններ՝ նրանք ոչ միայն կարող են ազդել համակարգի գաղափարային ուղղված որոշումների կայացմանը, այլև աստիճանաբար լեգիտիմությունը հասցնել ձգնաժամի:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ժողովրդաիշխանությունը խթանում է հասարակության յուրաքանչյուր անդամի ակտիվ մասնակցությունը և ներգրավվածությունը հասարակական-քաղաքական կյանքին, քանի որ միայն ակտիվ մասնակցությամբ է հնարավոր ժողովրդի և իշխանության միջև գոյություն ունենցող սահմանագծի վերացումը և ժողովրդավարական կառավարման համակարգի կայացումը: Միայն այդ դեպքում է հնարավոր «իշխանությունը պատկանում է ժողովրդին» սահմանադրաիրավական դրույթի ամբողջովին գործառնումը: Այս առումով առավել քան կարևոր է յուրաքանչյուրի մասնակցության կշռադատված կամքի գործադրումը՝ առանց ուրիշների կողմից ճնշման և պարտադրման միջոցների: Անհրաժեշտ է յուրաքանչյուր քաղաքացի իր մեջ արմատավորի այն համոզմունքը, որ ժողովրդավարական հասարակության մեջ, որտեղ գերակա են իրավունքի և օրենքի հավասարության սկզբունքները, ինքն է դրանք կրողն ու իրացնողը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Ենգոյան Ա.**, «Գաղափարախոսություն» հասկացության քաղաքագիտական մեկնաբանությունը, Երևան, 2014, էջ 17:
2. Տե՛ս նույն տեղում, էջ 18:
3. **Talo C., Mannarini T.**, Measuring participation: Development and validation the participatory behaviors scale, Social indicators research, September 2014, p. 5.
4. **Adler R., Goggin J.**, What do we mean by “Civic Engagement”?, Journal of Transformative Education 3 (3), 2005, p.238.
5. **Nekola M.**, Political participation and governance effectiveness: does participation matter?, January 2006, Charles University in Prague, p. 1.
6. Տե՛ս նույն տեղում, էջ 2:
7. Տե՛ս նույն տեղում, էջ 10:
8. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 10.12.1948 թ., հոդված 21:
9. **Petersson O., Hermansson J., Micheletti M., Teorell J., Westholm A.**, DemokratiochmedborgarskapDemokratirådetsrapport Stockholm: SNS, 1998 (See in **Bergstrom L.**, Political participation, Karlstad University, 2006, pp. 7-8).
10. **Freeman H.**, The Right of Protest and Civil Disobedience, Indiana Law Journal: Vol. 41: Issue 2, Article 3, 1966, pp. 231-232.  
<https://www.repository.law.indiana.edu/cgi/viewcontent.cgi?article=3628&context=ilj>, (հասանելի՝ 15.01.2020)
11. **Шестопал Е.**, Политическая психология: Учебник для вузов, М., ИНФРА-М, 2002, с. 130.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Քաղաքական մասնակցության հիմնախնդիրը արդի քաղաքագիտական դիսկուրսում  
Առնակ Սարգսյան

Քաղաքական մասնակցության հիմնախնդրի ուսումնասիրությամբ հողվածում հիմնավորվել է, որ մասնակցության ինստիտուցիոնալացման գործոնները հանդիսանում են քաղաքական համակարգի ժողովրդավարացման նախադրյալներ: Համաշխարհայնացման պայմաններում քաղաքական որոշումների ընդունման գործընթացը պահանջում է այնպիսի մասնակցային մշակույթի ձևավորում, որը կհամապատասխանի ժողովրդավարության չափանիշներին և կնպաստի ժողովրդաիշխանության իրացմանը: Ուստի գիտակցված մասնակցային գործընթացը արդի հասարակարգի կայացման ուղենիշն է, երբ հասարակության մեջ առկա խնդիրների լուծման անմիջական հաղորդակիցն է դառնում պետության քաղաքացին, իսկ պետությունն էլ իր գործողություններով հաշվետու է նրա առաջ:

РЕЗЮМЕ

Проблема политического участия в дискурсе современной политики  
Арнак Саргсян

**Ключевые слова:** политическое участие, политические права, форма участия, эффективность управления, политическая воля, власть и народ, принятие решений.

В статье исследуются вопросы политического участия и дается обоснование того, что институционализация участия является предпосылкой демократизации политической системы. В контексте глобализации процесс принятия политических решений требует формирования культуры участия, которая отвечает стандартам демократии и способствует реализации демократического суверенитета. Поэтому сознательный процесс участия является ориентиром для развития современного общества, когда гражданин государства становится непосредственным глашатаем проблем в обществе, и государство подотчетно ему своими действиями.

SUMMARY

The Issue of Political Participation in the Discourse of Modern Politics  
Arnak Sargsyan

**Keywords:** political participation, political rights, form of participation, effectiveness of governance, political will, power-people, decision-making.

The study of the issue of political participation has argued that the institutionalization of participation is a prerequisite for the democratization of the political system. In the context of globalization, the process of political decision-making requires the formation of a participatory culture that meets the standards of democracy and promotes the realization of democratic sovereignty. Therefore, a conscious participatory process is the benchmark for the establishment of a modern society, when the citizen of the state becomes the direct voice of the problems in the society and the state is accountable to him with its actions.